ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ու Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

քաղաք Երևան «13» ապրիլ 2023 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 05-Ա/Ք

ՀՀ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 15-ի N 204-Ա/2 հրամանով հաստատված «Գիտական միջոցառման և երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգի» 6-րդ կետը, հաշվի առնելով ՀՀ գիտության կոմիտեի նախագահի 2022 թ. փետրվարի 25-ի N 03-Ա/Ք հրամանով ստեղծված աշխատանքային խմբի 2023 թ. ապրիլի 7-ի առաջարկությունը և ելնելով ՀՀ պետական բյուջեով նախատեսված հատկացումների չափից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

Հաստատել ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա.

1) գիտական միջոցառումների ցանկը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) երիտասարդ գիտնականների դպրոցների ցանկը՝ համաձայն հավելված N 2-ի:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ ԳԿ նախագահի
«13» ապրիլ 2023 թ.
N 05-Ա/Ք հրամանի

Գիտական միջոցառումների ցանկ

Հ/հ	Խորագիր	Կազմակերպություն
1	Լանդաուի շաբաթ. տեսական ֆիզիկայի առաջնագիծը	«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
2	Թարգմանությունը միջնորդ լեզվի միջոցով	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
3	Երեխաներն ու ազգը. երեխաների բռնի փոխանցումը և Ցեղասպանության կոնվենցիան պատմական և արդի լույսի ներքո	«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ
4	Վիրտուալ աստղադիտարանների միջազգային ալյանսի փոխգործակցության խորհրդակցություն	ՀՀ ԳԱԱ «Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան» ՊՈԱԿ
5	«Մաթեմատիկան Հայաստանում. ձեռքբերումներ և հեռանկարներ-3» միջազգային գիտաժողով նվիրված ՀՀ ԳԱԱ 80-ամյակին	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
6	«Անկայուն երևույթները Տիեզերքում» միջազգային գիտաժողով՝ նվիրված Վիկտոր Համբարձումյանի 115-ամյակին	ՀՀ ԳԱԱ «Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան» ՊՈԱԿ
7	«Workshop OTHA - գարուն 2023» միջազգային գիտական կոնֆերանս	ՀՀ ԳԱԱ «Մաթեմատիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ

Հավելված N 2
ՀՀ ԳԿ նախագահի
«13» ապրիլ 2023 թ.
N 05-Ա/Ք հրամանի

Երիտասարդ գիտնականների դպրոցների ցանկ

Հ/հ	Խորագիր	Կազմակերպություն
1	Բյուրականյան երրորդ տարածաշրջանային աստղագիտական ամառային դպրոց	ՀՀ ԳԱԱ «Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան» ՊՈԱԿ
2	Ակադեմիկոս Ա. Մկրտչյանի անվան երիտասարդ գիտնականների գիտատեխնիկական դպրոց	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
3	Ռեգիոնալ հոսքային ցիտոմետրիայի գիտադպրոց	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ